# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Տաշիր** | Ավագանու հերթական նիստ | 24.12..2025թ. | 14:30 | **Տաշիրի համայնքապետարանի նիստերի դահլիճ** (ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 ) |

ՆԱԽԱԳԻԾ 107- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող,պետական սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին
6. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճների վարձակալության վճարների չափերը 2026 թվականի համար սահմանելու մասին,
7. Տաշիրի համայնքապետարանի ենթակայությամբ «Տաշիրի մշակույթի կենտրոն» և «Տաշիրի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճների և սենյակների վարձակալության վճարների չափերը 2026 թվականի համար սահմանելու մասին,
8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տաշիր համայնքի կողմից 2026 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

9.«Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա Ջերմոց 1-85*66, Ջերմոց 2-39*45 կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին

11.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 23-ի N 54-Լ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

12. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության տեղական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող վերականգնվող էներգիա և էներգաարդյունավետություն ֆինանսավորման ուղղության «Արևի լույս» ծրագրի շրջանակներում Տաշիր համայնքի համաֆինանսավորմանը համաձանություն տոլու վերաբերյալ,

13. Ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

---

ՆԱԽԱԳԻԾ 108 –Ն

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածի 1-ին մասով, 12-րդ, 13-րդ հոդվածի 1-ին մասով, 14-րդ, 15-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» 14-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական վճարների տեսակներն ու դրուքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Սահմանել, որ.
1) Տաշիր համայնքի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշումով սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) կամ թույլտվությունների տրամադրումը:
2) Տաշիր համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշման հավելված 2-ի 11-րդ, 12-րդ կետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, բացառությամբ սույն որոշման հավելված 2-ի 8-րդ կետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո.

4.Տաշիր համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական տուրքերի և վճաների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Տաշիր համայնքի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Տաշիրի համայնքապետարանի պաշտոնական համացանցային www.tashircity.am կայքում ՝տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի,

դրանց վճարման կարգի և ժամկետների վերաբերյալ տեղեկանքը հրապարակելով  ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:, իսկ ամսվա ընթացքում ստացված տեղական տուրքերի և վճարների գումարների, ինչպես նաև համայնքի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ տեղեկանքը՝  ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու

2025 թվականի դեկտեմբերի    -ի
N   --- Ն  որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | 2026թ. դրույքաչափերը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| 1) | հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| | ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15 000 |

| | | |
|---|---|---|
| | բ. մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15 000 |
| 2) | սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝ | |
| ա. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| բ. | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| գ. | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 200 000 դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետի ե. պարբերությամբ սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |

<table>
<tr><td>դ.</td><td>3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</td><td>1 000 000 մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն ենթակետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:</td></tr>
<tr><td>ե.</td><td>Շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող գործակիցները՝<br><table><tr><td>Գոտի</td><td>Գոտիականության գործակից</td></tr><tr><td>13-16</td><td>2.0</td></tr><tr><td>17-20</td><td>1.0</td></tr></table></td><td></td></tr>
<tr><td>3)</td><td>սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝</td><td></td></tr>
<tr><td>ա.</td><td>200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</td><td>30000</td></tr>
<tr><td>բ.</td><td>501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</td><td>50000</td></tr>
<tr><td>գ.</td><td>1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</td><td>50000</td></tr>
<tr><td>դ.</td><td>3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ</td><td>100000</td></tr>
<tr><td>4)</td><td>ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</td><td></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| ա. | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5 000 դրամի և 1-ին կետի 2-րդ ենթակետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը, |
| բ. | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 10 000 դրամի և սույն կետի ե. պարբերությամբ սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը, |
| 2. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ | |
| 1) | այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝<br><br>200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 60 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |

| | | |
|---|---|---|
| 2) | 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 200 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| 3) | 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 400 000 դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը |
| 3) | 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 2 000 000 դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը |
| 3. | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| 1) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3 000 |

| | | |
|---|---|---|
| 2) | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով |
| 3) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը |
| 4. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | 5 000 |
| | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| 5. | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |

| | | |
|---|---|---|
| 6. | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| 7. | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 100000 |
| 8. | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 100000 |
| 9. | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 100000 |
| 10. | համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60 000 |
| 11. | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 20000 |
| 12. | համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 50 000 |
| 13. | օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |

| | | |
|---|---|---|
| 1) | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5 000 |
| 2) | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10 001 |
| 3) | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13 001 |
| 4) | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20001 |
| 5) | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001 |
| 6) | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 65 000 |
| 14. | օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| 1) | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 5 000 |
| 2) | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10 001 |
| 3) | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13 001 |
| 4) | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20001 |
| 5) | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25001 |
| 6) | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 65 000 |

| | | |
|---|---|---|
| 15. | իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ | 350 |
| 16. | համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | |
| 1) | առևտրի օբյեկտների համար՝ | 25 000 |
| 2) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 50000 |
| 3) | բաղնիքների (սաունաների) համար՝ | 300 000 |
| 4) | խաղատների համար՝ | 1000000 |
| 5) | շահումով խաղերի համար՝ | 350 000 |
| 6) | վիճակախաղերի համար՝ | 149 000 |
| 17. | համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | |
| 1) | հիմնական շինությունների ներսում՝ | |
| ա. | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5 000 |
| բ. | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 10 000 |
| գ. | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 |
| դ. | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 20 000 |
| ե. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 30 000 |
| զ. | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 50 000 |
| 2) | ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |

| | | |
|---|---|---|
| ա. | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1 000 |
| բ. | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2 000 |
| գ. | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 4 000 |
| դ. | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 8 000 |
| ե. | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 |
| զ. | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 25 000 |
| 18. | քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 5 000 |
| 19. | ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2 000 |
| 2) | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3 500 |
| 3) | սոցիալական գովազդի համար՝ | 0 |
| 4) | այլ արտաքին գովազդի համար՝ | 1 500 |
| 5) | դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ | 375 |
| 6) | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով | 150 |
| 20. | ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման | 100 000 |

| | | |
|---|---|---|
| | գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացույցային տարվա համար՝ | |
| 21. | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացույցային տարում յուրաքանչուր մեքենայի համար՝ | 10 000 |
| 22. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ | 500 000 |
| 23. | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ | |
| 1) | 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 2 500 000 |
| 2) | 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 5 000 000 |
| 3) | 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 7 000 000 |
| 4) | 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 10 000 000 |
| 24. | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ | |
| 1) | «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ | 19 000 |
| 2) | հեստապարային ակումբի համար՝ օրացույցային տարվա համար՝ | 299 000 |
| 25. | իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ | 20000 |
| 26. | Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար | 10 000 |

*Հավելված 2*

*ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու*

*2025 թվականի դեկտեմբերի -ի*
*N --- Ն որոշման*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | | **2026 թվականի դրույքաչափերը /ՀՀ դրամ** |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | |
| 1) | մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 5000 |
| 2) | 101-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 10000 |
| 3) | 501-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 15000 |
| 4) | 1501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 20000 |
| 2. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում` դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար`համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | |
| 1) | մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5 000 |
| 2) | 101-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 10000 |

| | | |
|---|---|---|
| 3) | 501-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 15000 |
| | 4) 1501-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսան հազար դրամ. | 20000 |
| 3. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | |
| 1) | մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000 |
| 2) | 101-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 10000 |
| 3) | 501-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 15000 |
| 4) | 1500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 20000 |
| 4. | Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 2000 |
| 5. | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` | 2 000 |
| 6. | համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ | 5 000 |
| 7. | Աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| 1) | Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| ա. | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ Տաշիր քաղաքում ամսական՝ | 150 |
| բ. | ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար համայնքի գյուղական բնակավայրորում ՝ ամսական՝ | 100 |
| 2) | Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի | |

| | | |
|---|---|---|
| | հետևյալ դրույքաչափերով՝ | |
| ա. | առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 50 |
| բ. | հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 25 |
| գ. | վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 15 |
| դ. | գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 10 |
| ե. | զորանցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 8 |
| զ. | արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 10 |
| է. | շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, սույն հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի կետի ա)-ից զ) կետերով սահմանված դրույքաչափերի. եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է « Աղբահոնության և սանիտարական մաքրման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված առավել բարձր դրույքաչափով. | |
| 3) | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 100 |
| 8. | Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի կետի ա)-ից զ) կետերով և 7-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |

| | | |
|---|---|---|
| | | |
| 1) | ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար | 3 000 |
| 2) | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ | 10000 |
| 9. | համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ | 600 |
| 10. | ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի՝1 խմ համար | 150 |
| 11 | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ | |
| 1) | յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածքի մակերեսի համար՝ ամսական | 25 |
| 2) | յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի տարածքի մակերեսի համար՝ ամսական | 50 |
| 12. | համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար մեկ երեխայի հաշվարկով ամսական | |
| 1) | Ամալյա Կարապետայանի անվան համար 4 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | 6500 |
| 2) | Տաշիրի համայնքապետարանի համար 1 և համար 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | 5000 |
| 3) | Մեծավան բնակավայրի «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | 4000 |
| 4) | Սարչապետ բնակավայրի « Պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | 4000 |

| | | |
|---|---|---|
| 5) | հենակետային մանկապարտեզի այլընտրանքային տարատարիք խումբ | 1000 |
| 6) | Տաշիր համայնքի բնակիչ չհամարվող (այլ համայնքում մշտական հաշվառում ունեցող) երեխաների համար՝ | 27000 |
| 13. | համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով ամսական | |
| 1) | «Տաշիր համայանքի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար | 4000 |
| 2) | «Տաշիրի մշակույթի կենտոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար | |
| ա. | պարի խմբի համար | 4000 |
| բ. | շախմատի խմբի | 4000 |
| գ. | նկարչական խմբի համար | 4000 |
| դ. | կարպետագործության խմբի համար | 1000 |
| ե | գորգագործության խմբի համար | 1000 |
| 14. | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար | 0 |
| 15. | Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար՝ ` | 1000 |
| 16. | համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատում է համայնքի ավագանին. | |
| 1) | յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ | 100 |
| 2) | յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ | 300 |
| 3) | մեկ շաբաթվա համար՝ | 1 500 |
| 4) | մեկ ամսվա համար՝ | 5 000 |
| 5) | մեկ տարվա համար՝ | 50 000 |

| | | |
|---|---|---|
| 17. | համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման վճարի չափով. | |
| 1) | կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ | 500 |
| 2) | ծննդօգնության թեթև միջամտություն | 1000 |
| 3) | ծննդօգնության ծանր միջամտություն՝ | 5000 |
| 4) | վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից բացառությամբ գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջացառումների | |
| ա. | մանր կենդանիներ՝ | 100 |
| բ. | խոշոր կենդանիներ՝ | 200 |
| 5) | կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ | 200 |
| 6) | ախտահանություն՝ 1քմ | 200 |
| 7) | միջատազերծում՝ դեզինսեկցիա՝ 1քմ<br>. | 100 |
| 8) | կրծողների ոչնչացում՝ դեռատիզացիա՝ 1քմ | 200 |
| 9) | արհեստական սերմնավորում՝ | 5000 |
| 10) | մանր կենդանու հերծում՝ | 1000 |
| 11) | խոշոր կենդանու հերծում՝ | 3000 |
| 12) | կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը ՝ | 1000 |

| | | |
|---|---|---|
| 13) | կենդանիների նախասպանդային զննում կախված կենդանու տեսակից ՝ | |
| ա. | մանր կենդանիներ՝ | 1000 |
| բ. | խոշոր կենդանիներ՝ | 2000 |
| 14) | կենդանիների հետսպանդային զննում կախված կենդանու տեսակից | |
| ա. | մանր կենդանիներ՝ | 1000 |
| բ. | խոշոր կենդանիներ՝ | 2000 |
| 18. | Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 1000 |
| 19. | «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների ծառայություններից օգտվելու դիմաց փոխհատուցման վճար՝ | 250 |
| 20. | Համայնքի վարչական տարածքում համայնքապետարանի սեփականություն հանդիսացող հենասյուների վարձակալության վճար յուրաքանչյուր ամսվա համար՝ | |
| 1) | հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (կապի մալուխների անցկացման դեպքում)՝ | 500 |
| 2) | հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (ուժային մալուխների անցկացման դեպքում)՝ | 500 |
| 3) | հենասյուների վարձակալություն 1 հենասյան համար (գովազդային վահանակներ տեղադրելու դեպքում)՝ | 3 000 |
| 21. | համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ | 1000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն.ՍՈՂՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 108 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ղեկ.՝ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2026 թվականի բյուջեն՝
1) եկամուտների գծով՝ 4161835,0 հազար դրամ,
2)ծախսերի գծով՝ 4911835,0 հազար դրամ,
3)դեֆիցիտը (պակասուրդը) ՝ 750000 ,0 հազար դրամ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն N1-ի հավելվածի:
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն N2-ի հավելվածի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N3-ի հավելվածի:
5. Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N4-ի հավելվածի:
6.Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն N5-ի հավելվածի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N6-ի հավելվածի:
8.Սահմանել, որ՝
1) Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով մուտքերի համամասնությունները.
2) Ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումների չափաքանակը համայնքի ղեկավարի կողմից 2026 թվականի բյուջեի կատարման ընթացքում սահմանել 20% չափով:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 109 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետը, 5-րդ կետի 1-ին ենթակետը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 110 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ.ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ / /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով՝ վարձակալության իրավունքով, տրամադրել օգտագործման:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու

2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 110-Ա  որոշման

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի վարձավճարի չափն ու պայմանները*

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի չափը (հա) | Որակական հատկանիշներ | Վարձակալության ժամկետը (տարի) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տաշիր համայնք գ. Բլագոդարնոյե | 06-024-0119-0072 | գյուղատնտեսական | խոտհարք | 1,63059 | | 10 | 17000 |
| 2. | Տաշիր համայնք գ. Բլագոդարնոյե | 06-024-0119-0076 | գյուղատնտեսական | խոտհարք | 6,43891 | | 10 | 67000 |
| 3. | Տաշիր համայնք գ. Բլագոդարնոյե | 06-024-0102-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 1,54339 | | 10 | 16500 |
| 4. | Տաշիր համայնք | 06-077-0153-0015 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,5059 | | 10 | 9000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գ. Միխայելովկա | | | | | | | |
| 5. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0153-0019 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,4717 | | 10 | 8500 |
| 6. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0153-0021 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,5811 | | 10 | 10000 |
| 7. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0153-0020 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,5409 | | 10 | 9500 |
| 8. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0153-0012 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,933 | | 10 | 16000 |
| 9. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0153-0168-0017 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,131 | | 10 | 2500 |
| 10 | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0168-0019 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,313 | | 10 | 5500 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0168-0022 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,219 | | 10 | 4000 |
| 12 | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0168-0023 | գյուղատնտեսական | խոտհարք | 0, 303 | | 10 | 5500 |
| 13 | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0168-0026 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,36 | | 10 | 6500 |
| 14 | Տաշիր համայնք գ. Միխայելովկա | 06-077-0168-0024 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,7294 | | 10 | 12500 |
| 15 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0332-0002 | գյուղատնտեսական | վարելահող | 9,86759 | | 10 | 123500 |
| 16 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0370-0002 | գյուղատնտեսական | վարելահող | 6,37198 | | 10 | 80000 |
| 17 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0369-0026 | գյուղատնտեսական | վարելահող | 3,08302 | | 10 | 39000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0462-0156 | գյուղատնտեսական | վարելահող | 5,7196 | | 10 | 71500 |
| 19 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0316-0109 | գյուղատնտեսական | վարելահող | 5,02592 | | 10 | 63000 |
| 20 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0363-0048 | գյուղատնտեսական | վարելահող | 2,74097 | | 10 | 34500 |
| 21 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0358-0057 | գյուղատնտեսական | վարելահող | 1,18199 | | 10 | 15000 |
| 22 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0383-0001 | գյուղատնտեսական | վարելահող | 8,4455 | | 10 | 106000 |
| 23 | Տաշիր համայնք գ. Մեծավան | 06-074-0235-0038 | գյուղատնտեսական | այլ | 0,55591 | | 10 | 5000 |
| 24 | Տաշիր համայնք գ. Մեծավան | 06-074-0263-0201 | գյուղատնտեսական | խոտհարք | 1,23934 | | 10 | 13000 |
| 25 | Տաշիր համայնք գ. Պաղաղբյուր | 06-090-0102-0002 | գյուղատնտեսական | արոտավայր | 48,4091 | | 10 | 63000 |

ՕԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 111 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎՈՂ,ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ / /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի պահանջներով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վաչական տարածքում ընգրկվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության տրմադրմանը:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:
3. Տաշիր համայնքի ղեկավարին՝ պատրաստել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին՝ համապատասխան եզրակացություն ստնալու նպատակով:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 111-Ա որոշման

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի վարձավճարի չափն ու պայմանները*

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի չափը (հա) | Որակական հատկանիշներ | Վարձակալության ժամկետը (տարի) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տաշիր համայնք գ. Կաթնառատ | 06-053-1302-0004 | գյուղատնտեսական | արոտավայր | 123,5217 | | 10 | 1285000 |

ՆԱԽԱԳԻԾ 112 –Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՉԱՓԵՐԸ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

/Զեկ.ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.»Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մանկապատանեական մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճի վարձակալության 2026 թվականի վարձավճարը սահմանել՝
1) Մարզական խմբերի համար ամսական 20000 (քսան հազար) դրամ,իսկ ջեռուցման շրջանում 30000 (երեսուն հազար ) դրամ :
2) Մարզական միջոցառումների համար 1 օրվա համար՝ 20000 (քսան հազար) դրամ:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 113 –Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ «ՏԱՇԻՐԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» և «ՏԱՇԻՐԻ
ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՀԼԻՃՆԵՐԻ և ՍԵՆՅԱԿՆԵՐԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՉԱՓԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

/Զեկ.ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. 2026 թվականի համար «Տաշիրի մշակույթի կետրոն» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալության վարձավճարը մեկ ժամվա համար սահմանել 15000 (տասհինգ հազար) , իսկ ջեռուցման շրջանում՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ:
2. 2026 թվականի համար «Տաշիրի մշակույթի կետրոն» ՀՈԱԿ-ի սենյակների վարձակալության վարձավճարը 1 քմ համար սահմանել 700 (յոթ հարյուր) դրամ:
3. 2026 թվականի համար «Տաշիրի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալության վարձավճարը մեկ ժամվա համար սահմանել 5000 (հինգ հազար) , իսկ ջեռուցման շրջանում՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ:
4. Բարեգործական նպատակներով կազմակերպվող միջոցառումների համար դահլիճները տրամադրել անվճար:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 114 –Ա

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,

/Ղեկ.ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը 2026 թվականի համար ՝ համաձայն հավելվածի:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**Հավելված**

**ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու**

**2025 թվականի դեկտեմբերի 24 -ի թիվ 114-Ա որոշման**

1. **Հացահատիկի ցանքս 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը.**
 1) Համայնքի տարածքում՝ 11 000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ,
 2) Համայնքի տարածքից դուրս՝ 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամ,
2. **Հացահատիկի ցանքս 1 հա-ի համար՝ առանց դիզվառելիքը ծառայության վճարը.**
 1) Համայնքի տարածքում և համայնքի տարածքից դուրս ՝ 6 000 (վեց հազար) ՀՀ դրամ,

**3. Պարարտանյութի ցրում 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը.**
 1) Համայնքի տարածքում՝6000 (վեց հազար) ՀՀ դրամ,
 2) Համայնքի տարածքից դուրս՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ,

**4. Վար 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.
1) Համայնքի տարածքում՝ 32 000 (երեսուներկու հազար) ՀՀ դրամ,
2) Համայնքի տարածքում (անմշակ տարածք)՝ 35 000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ,
3) Համայնքի տարածքից դուրս՝ 35 000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ,
4) Համայնքի տարածքից դուրս (անմշակ տարածք)՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ,

**5. Թունաքիմիկատի ցրում 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը.**
**1)** Համայնքի տարածքում՝ 8000 (ութ հազար) ՀՀ դրամ,
**2)** Համայնքի տարածքից դուրս՝9000 (ինը հազար) ՀՀ դրամ,

**6. Վարելահողի տափանում (դիսկաբորոն) 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը.**
**1)** Համայնքի տարածքում՝ 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ,
**2)** Համայնքի տարածքից դուրս՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ,

**7. Վարելահողի տափանում (դիսկաբորոն) 1 հա-ի համար՝ նառանց դիզվառելիքը ի ծառայության վճարը.**
**1)** Համայնքի տարածքում՝ 11 000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ,
**2)** Համայնքի տարածքից դուրս՝ 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամ,

**8. Հունձ 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և կոմբայնավարի ծառայության վճարը**.
1) Համայնքի տարածքում՝ 11 000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ,
2) Համայնքի տարածքից դուրս՝ 14 000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ,

**9. Հունձ 1 հա-ի համար՝ առանց դիզվառելիքի ծառայության վճարը**.
1) Համայնքի տարածքում՝ 9 000 (ինը հազար) ՀՀ դրամ,
 2) Համայնքի տարածքից դուրս՝ 11 000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ,

**10. Չոր խոտի հավաքում 1 հա-ի համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստի ծառայության վճարը**.
1) Համայնքի տարածքում՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ,
2) Համայնքի տարածքից դուրս՝ 6 000 ( վեց հազար) ՀՀ դրամ,

**11. Չոր խոտի հավաքում 1 հա-ի համար՝ առանց դիզվառելիքի ծառայության վճարը**.
 1) Համայնքի տարածքում՝ 3500 ( երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
 2) Համայնքի տարածքից դուրս՝ 4 000 ( չորս հազար) ՀՀ դրամ,

**12. Բազմաֆունկցիոնալ էքսկավատորի մեկ ժամվա համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստ-օպերատորի ծառայության վճարը.**
 1) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝15 000 (տասնհինգ ) ՀՀ դրամ:

**13. Բազմաֆունկցիոնալ էքսկավատորի մեկ ժամվա համար՝ առանց դիզվառելիքի ծառայության վճարը.**

**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝ 8 000 (ութ  հազար) ՀՀ դրամ:
**14. Մինիամբարձիչի  մեկ ժամվա համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստ-օպերատորի ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝ 11 000 (տասնմեկ  հազար ) ՀՀ դրամ:
15. **Մինիամբարձիչի  մեկ ժամվա համար՝ առանց դիզվառելիքի  ծառայության վճարը.**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝7 000 (յոթ  հազար ) ՀՀ դրամ:
**16. Գրեյդերի մեկ ժամվա համար՝ ներառյալ դիզվառելիքը և տրակտորիստ-օպերատորի ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝20000 (քսան  հազար ) ՀՀ դրամ:
17**. Գրեյդերի մեկ ժամվա համար՝ առանց  դիզվառելիքի  ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝15000 (տասնհինգ  հազար ) ՀՀ դրամ:
18. **Ինքնաթափ մեքենայի մեկ ժամվա համար՝ ներառյալ դիզվառելիքը և վարորդի ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝ 11500 (տասնմեկ հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ:
19. **Ինքնաթափ մեքենայի մեկ ժամվա համար՝ առանց դիզվառելիքի ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝5500 (հինգ հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ:
20. **Մերսեդես Բենց միկրոավտոբուս ՝ ներառյալ դիզվառելիքը և վարորդի  ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝1կմ 250  (երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
**21. Մերսեդես Բենց միկրոավտոբուս ՝ առանց դիզվառելիքի ծառայության վճարը**
**1**) Համայնքի տարածքում և տարածքից դուրս՝ 1կմ 150  (հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՝ Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ  115 –Ա

---

.«ԲՈՋՈՅԱՆ»  ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ՋԵՐՄՈՑ 1-85*66, ՋԵՐՄՈՑ 2-39*45 ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

,

/Ղեկ.ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ  /  /

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 26.11.2025-ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի Երևանյան փողոց, թիվ 6/4 հասցեում հասցեում «ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա Ջերմոց 1-85*66, Ջերմոց 2-39*45 կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն .«Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա ջերմոց 1-85*66, ջերմոց 2-39*45 կառուցման աշխատանքների իրականացմանը:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 116 –Ա

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,

/Ղեկ.ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնությունները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ

**Հավելված 1**
**ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու**
**2025 թվականի դեկտեմբերի 24-ի N116 -Ա որոշման**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Տաշիր համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
ա) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմներիի ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների համար,
բ) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար,
գ) հաշմանդամ երեխաների համար
դ) Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված երեխաների համար»
2. Տաշիր համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
ա)միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
բ) միևնույն ընտանիքից երկու և ավելի միևնույն ՀՈԱԿ հաճախող երեխաների համար,
գ) միևնույն ՀՈԱԿ-ի տարբեր խմբակեր հաճախող երեխաների համար:

**ԱՇԽԱՏԱԿԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ**

**Հավելված 2**
**ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու**
**2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 116-Ա որոշման**

**ՑԱՆԿ**
**ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1.Միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
2)երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
3) երեխայի ծնողի կամ ծնողների մահվան վկայականները:
2.«Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաների համար.
1) երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը

2)երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
3)Հայաստանի Հանրապետությունում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու մասին տեղեկանքը:
3.Ընտանիքի երկու և ավելի անչափահաս երեխաներից միևնույն ՀՈԱԿ հաճախող երեխաների համար՝
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը
2) երեխաների ծննդյան վկայականների պատճենները,
3)երեխաների ՀՈԱԿ հաճախելու մասին տեղեկանքը:
4.Միևնույն ՀՈԱԿ-ի տարբեր խմբակեր հաճախող երեխաների համար՝
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը
2) երեխայի ծննդյան վկայականների պատճենը,
3)երեխայի միևնույն ՀՈԱԿ-ի տարբեր խմբակներ հաճախելու մասին տեղեկանքը:
4.Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձա զինծառայողների երեխաների համար,
1) երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտ) պատճենը
2) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ զոհված ծնողի մահվան վկայականը,
3) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ծնողի՝ իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամի կարգավիճակ սահմանելու մասին տեղեկանքը:
5. Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված երեխաների համար.
1) երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտ) պատճենը
2) «Բնակության վայրի մասին» տեղեկանք՜ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայքնապետարանից»

**ԱՇԽԱՏԱԿԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՝ Ն.ՍՈԼՈՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 117 –Ա

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 54-Լ
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

,

/Զեկ.ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ / /

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23--ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համյանքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանվորման փաստաթղթերը (գոտեվորման մասով) հաստատելու մասին» N 54-Ն որոշումը:

*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*
ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 118–Ա

---

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱ և ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ «ԱՐԵՎԻ ԼՈՒՅՍ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՈԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,

/Զեկ.ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ համայնքի 2026 թվականի բյուջեից « Արևի լույս» ծրագրի իրականացման համար 6400.000 դրամ համաֆինանսավորմանը, որը կազմում է ընդհանուր բյուջեի
20%-ը:
-*ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*

ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 119–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ / /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2026 թվականի փետրվարի 10 -ը, ժամը՝ 14:30-ին:

*-ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ*

ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ